ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

EU4Youth-ի շրջանավարտների ցանց

Իրականացման ժամանակահատված: 01.01.2020 - 31.07.2023

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 311 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

EU4Youth Coordination and Support, SALTO Eastern Europe and Caucasus Resource Centre, EU Neighbours East

Նախագծի կայքէջ: salto-youth.net/rc/eeca/infocentres/alumni/

Նախագծի նկարագրություն:

EU4Youth-ի շրջանավարտների ցանցը միավորում է «ԵՄ-ն՝ երիտասարդների համար» (EU4Youth), «Էրազմուս+», «Երիտասարդները գործողության մեջ» (Youth in Action) և «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրերի, ինչպես նաև «Երիտասարդ եվրոպական դեսպաններ» ցանցի երիտասարդ շահառուներին Արևելյան գործընկերության երկրներից: Ցանցը նպատակ ունի մոբիլիզացնել ոչ ֆորմալ կրթության շարժունակության ծրագրերում նրանց մասնակցության ընթացքում ձևավորված ոգևորությունը և կամավորական ոգին՝ աջակցելու գործընկեր երկրների անապահով երիտասարդների առավել ակտիվ մասնակցությանը ինչպես իրենց համայնքներում, այնպես էլ ԵՄ շարժունակության ծրագրերում:

Ակնկալվող արդյունքներ:

Իր գործունեության սկզբնական փուլում՝ 2020-2021 թվականներին, ցանցը միավորում էր 70 երիտասարդների՝ 10-ական շրջանավարտ Արևելյան գործընկերության երկրներից յուրաքանչյուրից, ու ևս 10-ին՝ Ռուսաստանից: Գործողությունները ներառում էին.

- Մեկնարկային ուսումնական դասընթացներ. ցանցի յուրաքանչյուր ընտրված անդամ անցել է Վրաստանում կամ Ուկրաինայում կազմակերպված երիտասարդական աշխատողների մեկնարկային ուսումնական դասընթացները (6-օրյա դասընթաց).
- Մենթորական աջակցություն. ուսումնական դասընթացների և Ցանցի գործունեության առաջին տարվա ընթացքում շրջանավարտներն աջակցություն են ստացել արհեստավարժ երիտասարդական աշխատողների՝ մենթորների կողմից: Մենթորներն ուղղորդում էին շրջանավարտներին իրենց ուսումնական գործընթացում, ինչպես նաև անապահով երիտասարդական խմբերի համար տեղական նախաձեռնությունների իրականացման ընթացքում.
- Տեղական նախաձեռնություններ անապահով խմբերի համար. շրջանավարտներից յուրաքանչյուրին իրենց համապատասխան համայնքի անապահով երիտասարդական խմբերի համար տեղական նախաձեռնություն մշակելու առաջարկ էր արվել: Այդ նախաձեռնությունների իրականացման համար շրջանավարտները միավորվել էին այլ շրջանավարտների հետ և ստացել ֆինանսական, վարչական և մենթորական աջակցություն ինը ամիս տևողությամբ այս նախաձեռնությունների իրականացման համար: